

ՄԱՍԻՍ

ԶԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԵՆ

5507 ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻՒ 22

21 ԱՊՐԻԼ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ եկեղեցականությունը
Խմբասանական Գեմեր
Էջմար Շանին Հայ Նկարիչը
(Ուսումնասիրություն)

Եմիլ Վեհաուն
Խաղական Դատականության Էջեր
Հոգուկ Դատարանի

Փոքիկ Երազանք
Համեռի Իրիկուն
Շառլ Անգլի-ի

Սիրոյ Թաղուր
Թամար Էլլի Փիֆո-ի

Հոգիս
Շառլ Կեռեմ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՌԵԹԵՆՍ ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԹՐԻՍՓԱՆ ԼԸՔԼԵՐ
ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՏՕՄԻՆՕ
ՔԼԿԱՏԻՆՅԻՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՅ
ՌՈՒԲԷՆ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱԵԱՆ

1907

THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

ԱՐԵՒԵԼՔ

Օրաթերթ ազգային, գրական և քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 զրջ. գաւառներու համար 108 զրջ. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Հասցէ՝ Ղալաթիա, Քամանոս փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրատարակ կ'ըլլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

Հին ՕՐԵՐ. — ՊՈՒՆՏ ԽՍՁԱՏՈՒՐ ՄԻՍԱՔԵԱՆ ՆԻ ԻՐԵՆ ԺԱՄԱՆԱԿԻՅ ԻՄԱՅԱԿԱՆԻՆ ՎՐԱՅ ՀԱՅԵԱՑՔՆԵՐ. — Յ. Գ. Մ. — Այս կենսագրական բանասիրական գործը, հրատարակուած է Սաքաեան տպարանէն՝ 140ի չափ էջերով, գրականութեան վրայ կարեւոր տեսութիւններով: Կը գտնուի բոլոր գրադատներուն քով. գին 7½ զրջ.:

ԼՈՅՍԻ ԵՐԵՍ ԿԸ ՏԵՍՆԷ

Մէկը՝ որ երկար ատեն տառապելէ ետքը ակռայի ցաւով՝ զայն քաշել կուտայ ճարտար ատամնաբոյժի մը, կամ արհեստական նուրբ միջոցներով լեցնել կուտայ ակռան, կամ գռռօնի մէջ առնել կուտայ, ա'լ անգամ մըն ալ երեսը չտեսնելով ցաւին: Խնդիր է սակայն միշտ՝ լա'ւ, ճարտար ու արուեստին գաղտնիքներուն գիտակցաւ ատամնաբոյժ մը գտնել: Այս նպատակին համար առանց վարանելու և դո՛ւ մնալու մեծ ապահովութեամբ պէտք է դիմել հանրածանօթ ատամնաբոյժ Խաչիկ էֆ. Ժամկոչեանի, որուն համբաւը և կարողութիւնը վաւերացուած է ամէնէն: Դիմել Պահէ-Գաբու:

ՀԱՒԱՔԱՄՈՅԻ ՆՍՄԱԿԱԴՐՈՇՄՆԵՐՈՒ ՍԻՐԱՀԱՐՆԵՐՈՒՆ. — Եթէ վաճառել ուզուած հաւաքածոյի նամակագրոյմներ ունիք, դիմեցէ՛ք Կ. Պոլիս, Ղալաթիա, Աւսարիական նամակատունին ետեւի կողմը և Դոմիթիօն Խանի կից՝ Տէմիր-խան, թիւ 25 հաւաքածոյի նամակագրոյմի վաճառական՝ Մարտիրոս էֆ. Արայճեանի, որ դո՛ւ հացուցիչ գիներով կը գնէ: Եթէ նամակագրոյմի հաւաքիչ էք և կը փափաքիք ձեր հաւաքածոն ճոխացնել՝ դիմեցէ՛ք դարձեալ Մարտիրոս էֆ. Արայճեանի, որ զիւրամատչելի գիներով կը վաճառէ՝ ամէն տեսակ հաւաքածոյի նամակագրոյմներ: Այս գործողութիւնները կը կատարէ թղթակցութեամբ ալ: Պէտք եղած ատեն Կ. Պոլսոյ յաճախորդներուն կ'այցելէ՝ նամակագրոյմներու գնման և վաճառման համար, եթէ կանխաւ յաճախորդներ իրենց հասցէն և փափաքը յայտնեն՝ 10 փարանոց քարթ-բօսդալով մը: Առանց որ և է փոխարինութեան նամակագրոյմներու գնահատում: Հասցէ՝ Մարտիրոս Արայճեան, Ղալաթիա, Տէմիր-խան թիւ 25 Կ. Պոլիս:

Դի՛ս. — Նամակ գրողներէն կը խնդրէ իրենց հասցէն յատկօրէն գրել:

Մայր Վարժարանի շինութիւնը Թաւշանձեան և Էգնական Էֆ. Կերու-
նպաստով, մէկ երկու ամիսէն պիտի սկսի: Պատրաստուած յատակադիժը
5000 ոսկի ծախք մը կը պահանջէ: Ամէն մանրամասնութիւններ նախա-
տեսուած են յատակադիժին մէջ, օգահան գործիքներ, գալօրիֆէր ևն:
Նուիրատուները որոնք նախապէս 1000 ոսկի ծախքով նորոգութիւն մը
կատարել կ'ուզէին, յօժարած են այս յատակադիժը ամբողջովին գոր-
ծադրել, որով դպրոցը ախպար վարժարանի մը օրինակը պիտի ըլլայ մեր
մէջ: Պոլսոյ մէջ առողջապահական և դիտական անուանութիւններ ըն-
ծայող ու է հայ վարժարան չկայ գրեթէ: Արդի յատակադիժը պատ-
րաստուածներուն մէջ ամէնէն կատարեալն է: — Պարտիզակէն կը գրեն
մեզ. — «Տեղիս Ամերիկ. Բարձր. Վարժարանին մէջ տեղի ունեցա-
սգահանդէս մը, ողբացեալ ուսուցչապետին՝ Ռ. Պէրպէրեան Էֆ. ի յի-
շատակին: Ջութակի ուսուցիչ Տիգրան Էֆ. Անդրէասեան մահերդ մը
նուագեց ջութակով՝ որուն կ'ընկերանար Որբանոցին տնօրէնուհի Miss
Newnham երգեհոնով: Յետոյ Արմենակ Էֆ. Տ. Յակոբեան բանախօսու-
թեամբ մը ներկայացուց Պէրպէրեան Էֆ. ի կեանքը և համայնքին մա-
տուցած կրթ. օգտակար ծառայութիւնները: * * Ապրիլ 29 ի իրիկունը
տեղի ունեցաւ երէց կարգի հանդէսը (Junior exhibition). Կարգին ինը
անդամներէն հետեւեալները խօսեցան. — Ս. Մաճիկեան՝ թուրքերէն
ուղերձ մը. Հմ. Ղազարոսեան՝ Օղը, Եր. Նալպանտեան՝ Պ. Աղաւեան,
Մ. Մորճիկեան՝ Քուռը. Վահր. Մկրտիչեան՝ Առողջ միտք առողջ մարմ-
նի մեջ: Վարժարանին նուագածու խումբը նուագեց ընտիր կտորներ:
Հանդէսը փակուեցաւ Տ. Պարգեւ Վրդ. ի և Տ. Կարապետ քհ. ի վերջին
օրհնութեամբ: Մ. Պաղտատեան: — Հանգուցեալ Պէրպէրեան Էֆ. ի
յիշատակին սգահանդէսներ տեղի ունեցած են նաև Իգմիրի մէջ, ինչպէս
այլուր: Պէրպէրեան Վարժարանի գոյութեան պահպանման համար ամէն
կողմէ նուիրատուութիւններ կ'ըլլան, որոնք կը շարունակուին գովելի
եռանդով մը: Փափաքելի է որ բարեսիրական այս ջանադրութիւնը
աւելի լայն համեմատութիւն մը ստանայ և գոյանայ գոհացուցիչ գո-
մար մը: — Ս. Հայրապետը թիւ 590 օրհնութեան կոնդակով մը գոհու-
նակութիւն յայտնելով Տ. Գէորգ Երէցեան Սրբազանի ծառայութեանց
մասին, հաստատած է Ն. Սրբադնութեան արքեպիսկոպոսութիւնը:

ԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷԿ ԶԱՂԹԱՆԱԿԸ. — Թոքախոր օրուան հիւանդու-
թիւնն է: Բաղմաթիւ ևն այդ ախտին բաղմապատկուելուն նպաստող
պատճառները: Վերջապէս ուրախութեամբ կը լսուի թէ Բալէրմագի
(Խալիս) հնչակաւոր բրօֆէսոր ձիուղէբբէ Պանտիէրա, երկար ուսում-
նասիրութեանէ ետքը՝ գտած է եղականօրէն ազդու դարման մը թոքախ-
տի մանրէներուն դէմ և ձեռք բերած յաջողութեանցը հետեւանքով
առաջարկած է իր դարմանի միջոցը ենթարկել կառավարական յանձնա-
ժողովի մը քննութեան: Ինք արդէն իսկ ձեռք բերած է բաղմաթիւ
բժշկական վկայութիւններ՝ հրաշալի կերպով ապաքինած հիւանդներու:
Այս դարմանը հակահեխական մըն է: Տօքթ. Պանտիէրա կը պնդէ որ իր



Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎԵ ԱՐՄԷՆ

55ԴԴ ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 22

21 ԱՊՐԻԼ 1907

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՕՐԵՐՈՒ ՄԷՋ)

Ա.

Ամէն խնդիր իր ծագումը ունի: Պէտք է դիտել զանի իր ակին մէջ, եթէ կ'ուզուի ճշգրիտ դադարի մը կազմել անոր իսկութեանը ու ինչութեանը նկատմամբ, և ա'յն շարժառիթներուն վերաբերմամբ, որոնք այդ խնդիրները ծնցուցած են տարբեր ժամանակներու մէջ, մերթ ընդհատօրէն ու մերթ մասնաւոր շարունակականութիւնով մը:

Հայ եկեղեցականութեան «ԽՆԴԻՐ»ը՝ հին է իր ծագումին չափ. և անկէ մեծազոյն տուժողները եղած են, մէկ կողմէն՝ լուսն եկեղեցականութիւնը և միւս կողմէն՝ Կրօնքը, եկեղեցին ու ժողովուրդը միանգամայն: Եւ հակառակ Հայ եկեղեցիի այսքան պարզ, յստակ ու փրկարար հանգամանքին, եթէ մեր ժողովուրդը տակաւին չէ ներշնչուած անկէ, ինչպէս որ պէտք է, ասոր պատճառները պէտք է փնտել ո'չ ժողովուրդին անընդունակութեանը և ո'չ ալ եկեղեցիին անկարողութեանը մէջ, այլ միմիայն այն յուսի ու ստորին վարմունքին մէջ, որով Հայ եկեղեցականը վերաբերուած է իր դասակարգին, իր կրօնական համոզմունքներուն, իր եկեղեցիի դարգացումի միտումին և իր ժողովուրդին իրապէս քրիստոնէական յառաջդիմասէր ձգտումներուն: Ասիկա ճշմարտութիւն մըն է, զոր դժբախտաբար ո'չ մէկ պատմական հիմքով պիտի կրնանք ուրանալ կամ հերքել:

Եթէ Հայ եկեղեցականութեան նախորերուն վրայ, ծանրացող մութ քողը պատուելու և անոր ներքին, բուն կեանքին թափանցելու համար պէտք եղած ո՛չ պատմական օֆիւնանները ունինք ձեռքերնիս և ո՛չ ալ բաւականաչափ լոյս՝ պրպտելու և հետազօտելու համար այդ հաղիւ սկզբնաւորուած եկեղեցականութեան կեանքին կողմնակի անկիւններն ու *coulisse*ները. եթէ մեզի կը պակսին եկեղեցական ինքնակենսագրութիւնները, կամ հին Հայ Մոնթաներիններու ներքին, անձնական յարաբերութեանց յուշատուրները, մենք շարունակ իրաւունք ունինք կասկածելու, թէ այդ վաւերագրերուն, այդ ինքնակենսագրութիւններուն պակասը մեզի չկրնար ենթադրել տալ, պակասը եկեղեցականութեան առանձնայատուկ ազեղ ընթացքի մը, որուն մէջ միշտ իբր գերագոյն շարժիչ կամ ազդակ ծառայած են նախանձն ու զրպարտութիւնը, կեղծիքն ու անձնական հակառակութիւնները: Առանց այս ենթադրութիւններուն, և առանց բուն իսկ Հայ եկեղեցականութեան մասնակցութեան չէ կարելի մեկնել ո՛չ Սբ. Ներսէսի մահուան պարագան, և ո՛չ ալ Սբ. Սահակի անցքը և անոր յաջորդող Սուրմալներու, Բրքիչոյներու և Շմուէլներու այնքան անպատուաբեր գոյութիւնը: Եւ եթէ երբեք մեր եկեղեցական պատմութեան այդ երկու իրապէս մեծ գործիչներուն այնքան լուսաւոր պատկերներու բարձրաքանդակը, արցունքով լմուած գիծեր ալ ունի, այդ ազօտ և տմոյն գիծերը բանուած են եկեղեցականներու ձեռքով, որոնք թերեւս աւելի ատելութիւն, աւելի նախանձ սերմանեցին, քան քրիստոնէական սէր և խաղաղութիւն:

* *

Հայ գրականութեան Ոսկեդարը, եթէ փառապալին է մեր կեանքին, գրականութեան ու կրօնքին, չմոռնանք թէ միեւնոյն ժամանակ ամէնէն մեծ վէրքն է եղած, թունուոր ու շարաւոտ վէրքը, Հայ եկեղեցականութեան, հետեւաբար և Հայ եկեղեցիի կուշտին: Լոյսի առատ ցնցուղով մը ճառագայթուած պատկերներուն վրայ բիծերը կը չփոթւին իրական մեծութիւններու հետ և ահա այդ պատճառով է թերեւս, որ մեր Ոսկեդարը և անոր անմիջապէս յաջորդող տարիները սարսուռ չեն ազդած բնաւ մեզի: Մինչդեռ պէտք է ըսել, թէ ամէն դարերէ աւելի մանաւանդ այդ դարաշրջանին մէջն է, որ Հայ եկեղեցականութիւնը իր ամէնէն ազեղ, ամէնէն տմարդի ու ամէնէն հակաքրիստոնէական կեանքը ցուցադրած է, մեր եկեղեցական ու գրական բարեբաաստիկ զարթնումի այդ լուսաւոր սեմին վրայ: Եւ երբ գիտենք հրապուրուիլ լոյսի ու շողի մարդարասիրտ այդ յորինուածքէն, դգալ՝ մեր հոգիներուն խորը՝ ա՛յն հմայիչ դիւթանքը, զոր ունեցան արեւուն առաջին ծագումին գիտակից գիտողները, չվարանինք միեւնոյն ժամանակ, վեր առնել ա՛յն քօղքը, որուն ներքեւ՝ զառամած ու յետադէմ եկեղեցա-

կանութեան նախանձէն ու անձկամտութենէն ծնած ցաւերը և կեղծիքները կը դարանակալեն :

* * *

Սահակ և Մեսրոպ, Հայ Եկեղեցիի ու Գրականութեան այդ երկակ միութիւնը, դիւթական այդ Ուրիմն ու Թումիմը մեր Եկեղեցիի լանջաւանակին, գերադանց փափաքէ մը մղուած, ուղեցին որ Յունական ծեքութիւններէ և Ասորական խժութիւններէ յոգնած ու խլացած Հայ ականջներուն «հայերէն խօսի «Աստուած», քանի որ հայախօս Աստուած մը միայն պիտի կրնար ներշնչել անոնց հոգիները, և անոնց ցոյց տալ ճամբան, ուրկէ պիտի քալէր դիտակցող մարդկութիւնը, արթնցնելով անոնց մէջ հոգեկան Մեծ-Պարտքին ճանաչողութիւնը, և անոնց տալով անոր կատարումին անհրաժեշտ հոգե-բարոյական կորովը : Այդ «եկեղեցական հսկայ յառաջդիմութեան» գործը գլուխ հանել չէր կարելի միմիայն երկուքին գործակցութեամբը : Կրօնքի մեծ գործերը իրենց կարեւորութեան համեմատ կը կարօտին գարծիչներու, որոնք գիտնան յարմարիլ՝ ամէն կերպով, իրենց յոնձնուած գործին, և ինքզինքնին ծառայեցնել անոր : Մատենադրութեան պատմութիւնը ցոյց կուտայ թէ Սահակ և Մեսրոպ իրենց ձեռնարկած եկեղեցական հսկայ գործը կարենալ ամբողջացնելու և զանիկա օժտելու համար իրեն անհրաժեշտ բարձրութիւնով, «պահանջելի բարեմասնութեամբ օժտեալ պատանիներ ընտրելով յատկապէս, զրկեցին հոն, ուր դպրութիւնք կը ծաղկէին դեռ» : Եկեղեցական զարթնումի այդ շրջանը իրապէս հրաշալիք մըն է մեր գրական ու կրօնական պատմութեան մէջ : Զարգացումի, ինքնութեան արթնցնող յոյզը նոր եռուղեւ մը ստեղծած է, իբր թէ հսկայ փեթակի մը շուրջը բզգացող միղուններ ըլլային անոնք, որոնք կը հեռանան պահ մը իրենց Մայր-Բոյնէն, երթալ հեռուներէն բերելու համար կրօնաբոյր կրթութեան, զարգացումի կենսաւէտ հիւթը, անով Հայ գրականութեան և Հայ թարգմանութեան կենդանարար մեղրը պատրաստելու համար : Անձնուէք երկուսարդութեան մէջ՝ պոկող զարգացումի ու ինքնաճանաչութեան այդ ծիրը չէր կրնար՝ առանց խոչընդոտի ու խորչակի հանդիպելու ուռճանալ : Եւ հոս է, որ պիտի տեսնենք՝ Ոսկե-դարուն այնքան հմայքոտ եռուղեւին մէջ, զարգացումի թշնամի, ինքնութեան յայտարար նշանը եղող հմտութենէ ու աշխատութեան ոգիէ զուրկ, թոյլ, զանդաղ ու պորտաբոյծ եկեղեցականութեան կեղծիքը, ատելութիւնն ու նախանձը այդ նորակազմ ու իրապէս Հայ Մատենադրութեան ու Եկեղեցիին պատուաբեր նորածիլ եկեղեցականութեան հանդէպ : Եւ Հայ եկեղեցականութեան այդ տգեղ պատկերը կը գծէ կրտսեր թարգմանիչներէն Սբ. Ղազար Փարպեցի :

* * *

Ինքնակենսագրականութիւնը (autobiographie) դրեթէ նոր ժամանակներու մատենագրականին մէկ կարևոր ճիւղը դարձած է, որով մատենագիր մը իր իսկ ձեռքով իր կեանքը կը գրէ, չմոռնալով անոր մէջ ագուցանել այն բոլոր խնդիրները, որոնք իր կեանքին ու ժամանակին հետ սերտ աղերսներ ունին։ Բոլոր մեծ մատենագիրները, գրեթէ առանց բացառութեան, իրենց ինքնակենսագրութիւնները կամ յիշատակները ունին այսօր որ՝ շնորհիւ տպագրութեան և օրագրութեան, շատ դիւրին պիտի ըլլար՝ առանց այդ գրական աշխատութեան իսկ, հանրութեան հետ գործ ունեցողներու կեանքին գրեթէ ամբողջական դրուագները կազմել, անաչառ ու անկաշկանդ տրամագրութիւնով մը։

Հին ժամանակները ինքնակենսագրութիւնը անծանօթ էր գրեթէ։ Իսկ մեր մէջ մասնաւորապէս ինքնակենսագրութիւնը պարզ յիշատակարան մըն էր, երկասիրուած կամ օրինակուած ձեռագրի մը կցուած, ուր գրիչը կամ օրինակողը, կը բաւականանար արձանագրել «ես մեղսամած», «տրուպս ի մարդկանէ», «ես տգէտ և անարժան» այսինչ բառերը գրելով։ Մատենագրական այս աչքառութիւնը բաւական չէր, կարծես, և ահա անոր մօտ անթարգմանելի անտարբերութիւն մըն ալ, ուրիշ մեր բոլոր հին մատենագիրները վարակուած են, և ատով իսկ հոգ չեն տարած իրենց ժամանակակից ու զրական-կրօնական կեանքի մէջ նշանաւոր հանդիսացած անձնաւորութիւններու կեանքը գրել։ Հեռի՛ մեղ հասած կարգ մը տուստելահիւս ու վիպային վարքագրութիւններէ բուն ինքնակենսագրութիւնով կամ կենսագրութիւնով թերեւս մեր մատենագրական պատմութիւնը պիտի կրնար իր ճօն էջերով ու անձերու փայլուն դրուագներով մրցիլ գոնէ հին արեւմտեան աղգերու գրական կեանքին հետ։ Յաւալի իրողութիւն մըն է, սակայն, որ այսօր մեր աղքատիկ մատենագրութեան չոր ու ցամաք պայմանութիւնը դասաւորելու և կանոնաւորելու համար կը պակսի մեղի ամէնէն աւելի անհրաժեշտ եղող տարրը՝ կենսագրականը, որ բոլոր ստոյգ և իրական պատմութիւններու քանդակին կարկառուն մասը կը կազմէ։ «Մեր մատենագրութեան պատմութեան թերին, կը գրէ Դուրեան Սրբազան, առաւելապէս ակնյայտնի կ'երևի մեր մատենագրաց կենսագրականին նկատմամբ, վասնզի ցամաք ու կցկաուր յիշատակութիւններ չեն կարող կենդանութեան շունչ մը փչել մատենագիր մեծ անձնաւորութեանց, ու միայն աւանդական համբաւն իրեւ փայլուն շրջանակ կը ծառայէ նոցա եղծեալ և գունաթափ պատկերին»։

Սբ. Ղազար Փարպեցի իբր Հայ մատենագիր դասապարտուած էր իր գործակիցներուն հետ խորասուզուիլ իսպառ մոռացումի աղջամուղջին մէջ, եթէ երբեք իր թշնամիներուն ձեռքով հալածանքի մասնուելով չստիպուէր իր ջատագովականը գրելու։ Հայ գրագէտ-եկեղեցականին դէմ

յարուցուած այդ հալածանքը կը բղխէր բուն իսկ զինքը յառաջող եկեղեցականներէ, որոնց պորտաբոյծ ու հեշտասէր կեանքին հանգէս դարուն ծնցուցած առոյգ, ուղղամիտ ու զարդացած եկեղեցականութիւնը դիւր չէր գար: Տակաւին Փարպեցիի այդ ջատագովական թուղթը չգտնուած, բանասէրները սաչափ միայն ծանօթութիւն ունէին այդ եկեղեցական-մատենագրի մասին, թէ ապրած էր Ե. ղ. դարուն վերջը, թէ աշակերտած էր Աղանի և թէ եկեղեց. պատմութիւն մը գրած: Սակայն այն օրէն սկսեալ երբ իր թուղթը հրաժեշտ կուտար զիջուած փոշիներու կոյտին, Ղազար բոլոր կրօնաւոր մատենագիրներու բաղդաւորագոյնը եղաւ և այսօր այդ թուղթին շնորհիւ, իր ապրած դարը երեւան կուգայ: Այդ թուղթը մեզի կը պարզէ հինգերորդ դարուն եկեղեցականութեան վիճակը, որ եթէ գրական տեսակէտով, իբրեւ ոսկեգար՝ փառքի ամենափայլուն էջը կը ձեւացնէ մեր մատենագրութեան պատմութեան աղքատիկ էջերուն ծոցը, միւս կողմէն ամօթի լալն էջ մըն ալ կը բնայ, մատնանշելով եկեղեցականութեան մէջ բացուած խրամատ մը և ցոյց տալով տգէտներու նախանձը և յարուցած հալածանքը հանգէս չորերու: Սահակի ու Մեսրոպի աստուածադեցիկ մղուամովը հազիւ թէ կ'ողջունուի մտաւոր բարգաւաճումի, գրական յառաջդիմութեան և կրօնական ողջմտութեան արշալոյսը, տգիտութեան մառախուղի այնքան դարերէ յետոյ, և ահա խաւարասէր ու յետադիմական կրօնաւորներ ու արեղանք՝ մեղկութեան մէջ սնած, առանց զգալու ժամանակին պահանջները, սկսան ոգիով չափ հակառակիլ՝ ոսկեբերան ու ոսկեգրիչ թարգմանիչներու զարգացման քայլերուն: Բայց որչափ կենդանի էին Սահակ ու Մեսրոպ, այդ երկու աստուածային վարդապետները չափ կը դնէին սանձարձակ բերաններու, նկատելով կրօնական պէտքերը, ձեռնարկին կարեւորութիւնը, զարգացումին օգուտները, ուրկէ պիտի նպաստաւորուէին Հայ ժողովուրդն ու եկեղեցին:

Հազիւ անոնք վախճանեցան, և ահա ազիկար եկեղեցականներու սրտին խորը կուտակուած նախանձի ու ատելութեան շողինքը սկսաւ դուրս պոռթկալ ա՛յնքան կատաղօրէն: Հալածանքը սկսաւ անոնց դէմ, սուտ բարեպաշտութեան, կեղծաւոր կրօնականութեան կեղեւին տակ պահուըտած նախանձին յարուցած հալածանքը, որուն երեսէն երանաշնորհ թարգմանիչներէ շատեր փաթաղիկեալ, ուրիշներ՝ աղանդաւոր, չատեր հերետիկոս և ուրիշներ անկրօն ամբաստանուեցան անիրաւօրէն, այդ միեւնոյն անառակ ու չամբուշ եկեղեցականներու ձեռքով ու թեւադրութիւնով: Այս ամէնուն մասին տեղեկութիւն անգամ պիտի չունենայինք մինք, և թէ դիպուածը մեր ձեռքը չձգէր Փարպեցիին թուղթը: Այդ ընդարձակ նամակ-թուղթը երեւան կը բերէ Հայ գրականութեան զեղազտական հանճարին ու ոգին գրողմը, և իրաւամբ

կ'արդարացնէ Ղաղարի ճարտարան ու Աթենացի յորջորջումը և ցոյց կուտայ անոր մէջ կրօնական ողջմտութիւն մը, որ ձևուած է աւետարանական սկզբունքին վրայ. և միւս կողմէ մեզի ճշմարիտ նկարագիրը կուտայ նոյն դարու Հայ կրօնաւորութեան:

Այդ թուղթը երկար տարիներ անձանօթ մնաց մատենադարաններու անկիւնը: Շախաթունեան Յովհաննէս Արքեպիսկոպոս, Տեսուչ Էջմիածնի Մատենադարանին՝ 1829ին Մսեր վարժապետ Զմիւռնիացիին հետ զբաղած էր կարգի դնելու Մատենադարանը, երբ Ղաղարի եկեղեցական պատմութեան մէկ ձևագիրն մէջ գտաւ անոր այս նամակը: Այդ օրինակը միակն է, որուն վրայէն 1853ին Մկրտիչ Էմին առաջին հրատարակութիւնը ըրաւ, իր կողմէն անոր վրայ աւելցնելով Յառաջաբան մը և ի՛նչ ի՛նչ ծանօթութիւններ: Կ'արժէր որ Ե. րդ. դարու Հայ եկեղեցականութեան ինկած վիճակը անգամ մըն ալ ցոյց տալու համար, այդ թուղթին աշխարհաբար թարգմանութիւնը ամբողջութեամբ հրատարակէինք Մասիսի մէջ, բայց չուզելով գրական-գեղարուեստական թերթի մը ընթերցողները ձանձրացնել զուտ եկեղեցագրական ցամաքութիւնով մը, պիտի բաւականանամ այդ թուղթէն Հայ եկեղեցականութեան վերաբերող գլխաւոր հատուածները յառաջ բերել, մասնաւոր ծանօթութիւններով, և այնուհետեւ այդ տեղեկութիւններուն վրայ հիմնուած, զուգակշիւ մը շինել Հին և Նոր եկեղեցականութեան, քանի որ մեր այսօրուան կեանքին մէջ ալ այդ նախանձի, այդ ատելութեան ստորնութիւնները գլուխ կը ցցեն, հրապարակի վրայ, ինքզինքնին գեղերեսելով կրօնքի ու եկեղեցիի կեղծ չափով մը:

ՄՈՒՆԵՐ, ՆՊԻՍԱՊՈՍ

Հ Ո Ք Ի Ս

Հիւանդ սերեւ մը տեսայ կանանչին մէջ դաւաճումն: Ի՛նչ աղուոր էր գարունը, փափուկ հովէն օրօրուն Սիրուն խոտերը դաւաճին, ծաղիկներն ալ բխր գոյնով Կը խնդային լռելեայն, գաղջ աւետուն տակ գինով:

Բայց զարնային կենսաւէտ այդ պարին մէջ մայրուն՝ Հիւանդ սերեւ մը տեսայ, կանանչին մէջ դաւաճումն, Զորցած սերեւ մը նիւար, որ գեփխոյին հրպուսով Մեռելամեծն կը դողար՝ մարգերուն մէջ տկնաբով:

Սիրքս անհուն ցաւով լի՝ եւ ծռեցայ սրգահար Մասներու մէջ առի գայն, ու իր մարմինը նիւար Դուրգուրանքով, արցունքով մօտեցուցի օրբունքիս...:

Անմամանակ քաւումս՝ զարնան սերեւ մ'է հոգիս. Ծաղիկներուն մէջ կեանքին, գեփխոյին տակ մայիսի. Ա՛լ ժպտելու անկարող, ան կը քաղա՛յ, կը մըսի՛...:

Հիւանդ սերեւ մը տեսայ կանանչին մէջ դաւաճումն...

ՌՈՒՐԵՆ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Մասիսի ներկայ թիւով, հասոյքը ունինք հրատարակելու, ողբացեալ Ռէթէոս Պէրպէրեանի **Իմաստաւէր Գեւմի** մը վրայ մէկ ուսումնասիրութիւնը, իր վերջին գրութեան, զոր **Մասիսի** համար պատրաստելու հոգը ունեցած էր մեծանուն գրագէտը, Պէրպէրեանի՝ **Մասիսի** հանդէպ ունեցած համակրանքին կենդանի նշանը եղող այդ աշխատակցութիւնը՝ որ իր վերջին ալ աշխատակցութիւնը ու ձեռագիրը եղած է՝ **Մասիսի** հրիտակումը՝ մեզի համար Թանկագին յիշատակ մըն է և բացառիկ բախտ՝ մը խմբագրութեանս՝ որ պատիւը կ'ունենայ հիւրընկալելու ներհուն զրազէտին վերջին ձեռագիրը, գրութեան ա'յնչպիսի անմոռանալի յիշատակներով զիշերը իր մահը նախորդող օրուան։ Ճշմարիտ յուզումով մըն է որ, **Մասիսի** մէջ կ'ամփոփենք՝ յաւատարմութիւն մահու այդ աշխատակցութիւնը՝ իր վերջին նուիրական ձեռագիրը և Թանկագին աւանդը զրականութեան՝ որո'ւն վրայ ցամքած է մեկանը զրիչի անխոնջ վաստակաւորին, որո'ւն հպած են վերջին անգամ իր ձեռքերը և որո'ւն վրայ բաբախած ու Թրժուցած են իմացականութեան կայծը և աչքին լոյսը բազմաւորիւն ուսուցչապետին։

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

ՍՈԿՐԱՏ

Սոկրատ արժանի է նկատուելու իբրեւ հայրը ճշմարիտ փիլիսոփայութեան, նոյն իսկ գիտութեան։ Գիտութիւն և փիլիսոփայութիւն իրենց առարկայ ունին ընդհանուրը. իրենց դասած ճշմարտութիւնները, իրենց իբրեւ եղրակացութիւն կազմած նախադասութիւնները ընդհանուր են և կը վերաբերին միշտ երեւութից և էից ամբողջութիւններու, որոց հառարակաց հանգամանքն ու բնութիւնը կը բացատրեն։ Արդ մարդկային միտքը ինչպէս կը հասնի այդպիսի ընդհանուր, տիեզերական դաստիարակութիւններու կամ, որ նոյն է, օրէնքներու, և ինչ կրաչափք տարտի վնասուել իր խաբուած չըլլալուն, մէկ խօսքով ուղիղ մտածումներու և երեւութից բացատրութիւններուն մէջ վստահօրէն յառաջանալու ճամբան, կամ տրամաբանական մեթոտը (dialectique) որն է, ահա՛ բուն այս հիմնական ու կարեւոր կէտին իր ուշադրութիւնը դարձնելով է որ Սոկրատ եղաւ ճշմարիտ վերանորոգող մ'իմաստասիրութեան, միանգամայն և ըլլալով բարոյական գիտութեան մեծ հիմնադիր մը։ Մանաւանդ կրնայ ըսուիլ թէ Սոկրատի բուն նպատակն էր այս վերջինը, բարուց ուղղութեան ճշմարիտ կանոնները ցոյց տալ, բայց ըստ որում ինք համոզուած էր թէ առաքինութիւնը գիտութիւն է, թէ բարոյական կանոնները ճշմարտութիւններ են ինչպէս բնութեան կարգաց վերաբերեալ ամէն ճշմարտութիւն, կը խորհէր որ նոյն գիտական մեթոտները հարկաւոր էին բարոյական ճշմարտութեանց գիտարին և հաստատութեանն համար, որով և իր մեթոտը ընդհանուր գիտական մեթոտ մ'եղաւ և ծառայեց այսպէս նոյնիսկ Բանական Արուեստին հիմերը դնելու, գիտական մեթոտը հիմնելու, և թէեւ կարծուեցաւ թէ կ'անձկացնէր իմաս-

տասիրութեան դաշտը՝ հրաժարելով իր նախորդաց տարապայման յաւակնութիւններէն «Ծանիր զքեզ» ընտրելով իրեն նշանաբան, բայց այդու աւելի լրջօրէն ու արդիւնաւորապէս ծառայած գտնուեցաւ փիլիսոփայութեան:

Սոկրատ Բրիտտոսէ յառաջ 470ին ծնաւ Սթէնքի մէջ: Իւր հայրը, Սոկրոնիսքոս, արձանագործ էր և ինքն իսկ ի սկզբան իր հօր արուեստով պարապեցաւ, բայց յետոյ ինքզինք ամբողջապէս նուիրեց իմաստասիրութեան և բարոյախօսութեան: Միևնոյն ատեն զանց չըրաւ իր քաղաքացւոյ պարտականութիւնները: Իրրեւ զինուոր ծառայած էր իր քաղաքին տուած պատերազմներուն մէջ. Պոտիդէի մէջ Աղկիբիադէսը ազատած էր ու Դելիոմի մէջ՝ Բսենոիոնը: Վիճակաւ ընտրուած Ծերակոյտի ժողովին անդամակցած էր, ուր իր համակրանքը կորսնցնելով մերժած էր քուէի դնել անիրաւ մահալճիւ մը: Սոկրատ պարզ էր իր ապրելու և ուսուցանելու եղանակներուն մէջ: Կ'արհամարէր քաղաքակիրթ կեանքի նրբութիւնները և բարեղարգութիւնները, բոկոսն կ'երթար, կը հանդուրժէր ցուրտի, քաղցի, ծարաւի, մինչ խնդրէնքէ կը լաժնուէր՝ կերուխումէ ու գինեբլուքէ իր կորովի մարմինն անմիաս, թողլով իր սեղանակիցները թմրած ու գինով: Կը խօսէր կը քարոզէր ամենուրեք առանց ունենալու ուսուցման որոշ վայր մը, ամէն տեղ լաւ էր իրեն խօսելու համար երբ իր շուրջ կը տեսնէր ունկնդիրներու շրջանակ մը, տաճարաց գաւիթները, մարզարանները, հրապարակները ու կը խօսէր ամէն կարգի մարդոց հետ որոց յաճախ իրենց վիճակին ու պէտքերուն յարմար օգտակար թելադրութիւններ կ'ընէր: Իր խօսքը սովորաբար կ'աւանդէր բարոյագիտական ուղղութիւն մը: Իր առաջին արուեստը, արձանագործութիւնը, գեղեցկին ու գեղարուեստին ճաշակը տուած էր իրեն, ինչ որ իր դպրոցին մէկ յատկանիշն էր, և շատ անգամ առիթ կ'ունենար նկարչութեան, քանդակագործութեան, հուստորութեան վրայ խօսակցելու արուեստագէտներու և գրագէտներու հետ: Պարզ ու ընտանի էր իր սովորական ոճը, բայց գիտէր նաև մերթ մոգել իր աշակերտները իր սրամտութեամբն ու պերճախօսութեամբը: Արտաքին բաւական թանձր կերպարանքի մը տակ նրբախոհ ու նրբազգած հոգի մը կար անոր մէջ, և խորհրդապաշտ նաև. ինքզինք Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ կը հաւատար. ծանօթ է «Սոկրատի Դեւը» որուն թելադրութեանցը կ'ապասէր շատ անգամ իմաստասիրական հարցումի մը պատասխանելէ յառաջ: Իր ուսուցանելու կերպը, որ նշանաւոր մնացած է Սոկրատեսան մեթոճ անուանով, կը կայանար գլխաւորապէս հարցումներու մէջ, որը ճարտարապէս ուղղուած և շղթայուած, խօսակիցը կը տանէին քայլ առ քայլ փնտռուած ճշմարտութիւնը գտնելու: Սոկրատ կ'ընդունէր որ ճշմարտութիւնը մեր մէջն է, մարդուն մտքին մէջն է, և թէ հարկ էր միայն պատշաճ գրգռումը

տալ մտքին ու անդրադարձումներ թելադրել մինչև որ ճշմարտութիւնն ինքնին պայծառապէս դար երեւան: Ուսուցանողին գործը կը նմանցնէր ծնուցիչի, մանկաբարձի գործին. ինքզինքն ալ, իր մօր՝ փենարէտի, որ մանկաբարձ էր, արուեստին հանգիստութեամբ, մտքերու ծնուցիչ կը կոչէր: «Մանկաբարձ կ'իներու ի գործ դրած արհեստին հետ նոյն է իմն ալ, սա տարբերութեամբ որ ես այր մարդերու աղատման կ'օգնեմ, իսկ անոնք կ'ին մարդերու, և ես ոչ թէ երկունքի մէջ եղող մարմինները, այլ հոգիները կը խնամեմ»: Բայց երկու եղանակ ի գործ կը դնէր իր խօսակիցներուն հետ: Երբ անոնք Սոփեսաներն էին սրոյ ուսուցիչ տգիտութիւնը կ'ուզէր պայթեցնել՝ իր գործածած եղանակը կեղծ տգիտութիւն մը, հարցախրոթիւն (ironie) մ'էր, որով ճարտար հարցումներու շարքով մը խօսակից սփեատը մնամէջ պարզուկ ագէտը, հետեւութենէ ի հետեւութիւն, կը բերէր կը յանգեցնէր անհետիւթ եզրակացութեան մը որ այն սկզբունքին յորմէ մեկնած էր՝ սխալն ու այլանդակութիւնն ընդունելու կը պարտաւորէր զինքը: Իսկ իր աշակերտաց հետ գործածած կերպը ծննդաբերութեան (maïeutique) մեթոտն էր, որով դադափարէ ի դադափար կ'առաջնորդէր ուսանողը ինքն իսկ խելամուռ ճշմարտութեան:

«Երկու բան կայ, կ'ըսէր Սոփատոսէլ, զորս կարելի է Սոկրատի վերադրել, այն է խելամուտեան ճառերը և ընդհանուր սահմանը»: Սոփեսաներն ընդհանուր դադափար յայտնող բառերուն իմաստի տարատմութենէն կ'օգտուէին՝ ամէն ինչ ըստ քմաց բացատրելու համար. Սոկրատ ուղեց որոշ սահմաններով ճշգրէ բառից իմաստը, որով և բնութիւնն այն իրաց և էից զորս այդ բառերը կը բացատրէին, սահմանել՝ ճշգրէ էր դադափարաց խելութիւնը, էական և երեւութից գոյութեան պայմանները, իրաց օրէնքը, ինչ որ պահանջն է գիտութեան. այդ սահմանը այսպէս ճշգրտուած սկզբունքներ կ'ըլլային որ կը ծառայէին ընծայական իմաստասիրութեանց, այն է ընդհանուրէն ի մասնաւորն իմաստասիրելու, ընդհանուր ճշմարտութեանց հետեւութիւնները եղրակացնելու: Բայց այդ ընդհանուր սկզբունքներուն և սահմաններուն հասնելու համար պէտք էր մեկնիլ մասնաւոր ճշմարտութիւններէ և անհատական դադափարներէ և անոնց նմանութեանցն ու տարբերութեանց վրայ խելամուռով համիլ ընդհանուր դադափարներուն և օրէնքներուն: Ահա՛ ինչ որ կ'ընէր Սոկրատ օրինակներ կուտելով, հանգիստութեանց դիմելով, դիտողութիւն ու քննութիւն թելադրելով: Ահա՛ ինչու համար ըսինք թէ նոյն իսկ գիտական մեթոտը, տրամաբանական ճշմարիտ մեթոտն էր որ կը հիմնէր Սոկրատ, և իմաստասիրութեան ճշմարիտ սկիզբը կ'ընէր ան:

Սակայն յաւէտ բարոյախօս մ'էր. ճշմարտութիւնը բարեոյն համար կը փնտռէր, ու մեծագոյն ճշմարտութիւնը բարին էր իրեն համար:

Ընդունելով Անագոսագորի հետ թէ տիեզերաց առաջին պատճառը իմացական էութիւն մ'է, միտք ու բան էր, խափոյն հետեւցուցած էր թէ ամէն ինչ՝ իբրեւ իմացական պատճառի արդիւնք՝ բարւոյ համար, բարի վախճանի մը համար եղած է, թէ բարին պարտի մեկնել զամենայն, և թէ ճշմարիտ ու գերագոյն իրականութիւնը բարին է, որուն ստորադասուած են ամէն այլ իրականութիւնք: «Եթէ մէկն ուղէ, կ'ըսէր, իւրաքանչիւր բանի պատճառը գտնել, թէ ինչպէս կը ծնի, կը կորսուի կամ կայ ան, բա՛ւ է միայն փնտռել լաւագոյն եղանակը որով ան կրնայ ըլլալ»: Ապա տիեզերքն ու մարդը բացատրող գիտութիւնը բարւոյն գիտութիւնն է, և «Սոկրատով փիլիսոփայութիւնը՝ յոնիական բնագիտութիւնէն, պլաթագորեան ուսողութիւնէն և եղէական տրամաբանութիւնէն կը վերածուէր բարոյագիտութեան, որ կ'ուսումնասիրէ իրաց առնչութիւնը բարւոյն հետ. — Ալ. Ֆուլիէ»: — Բարւոյն գիտութիւնը Սոկրատի համար կը նոյնանար բարւոյն գործնականին հետ. ո՛վ որ բարին զիտէ՝ կը գործէ բարին. գիտութիւն և աւաքինութիւն նոյն են, չարը տգէտ մ'է, ոչ ոք կամաւ չար է, վասնզի ոչ ոք կ'ուղէ իր չարիքը՝ որուն ուշ կամ կանուխ կը յանգի չար գործը, բայց միայն տգիտութեամբ: Գիտնալը դասաւորել է իրերը սեւերու և սեպականերու, ապա և գործերը դասաւորել, այսինքն զանոնք բարի կամ յոռի, օգտակար կամ վնասաբեր, արդար կամ անարդար, որ ըսել է առնել կամ չառնելի, հետեւելի կամ զգուշալի խումբերու զատել իր բանականութեան մէջ, յորմէ հարկաւորապէս կը հետեւի ըստ Սոկրատայ և գործեն ըստ այդմ: «Կրթեցէք մարդիկը և լաւագոյն պիտի ընէք զանոնք», կ'ըսէր, և կը մերժէր անձնաշխատութիւնը (libre arbitre): [Յաջորդով]

ՌԷԹԷԴՍ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՍԻՐՈՅ ԹԱՂՈՒՄԸ

Նոմիկն շռիկն ներքեւ պեղեցի
Փոս մը՝ մանկական գերեզմանի պէս.
Ու քաղեցի հոն խոստումներդ ես,
Խոստումներ՝ զոր մերք ջրաւ սերդ ինծի:

Զանոնք մրդեցի հողերուն ճակ գորշ.
Ու մանուտ քաւ մը դրդի վրանիս.
Ու քոյրսիքը սիրոյ դամբանիս
Պըսակ հիւսեցի վարդէն վաղարօշ:

Մեռան ծաղիկներն՝ անգոր՝ սիրոյդ պէս,
Արեւմարտիս աշ առաջ իրիկուն.
Սակայն՝ իմ ցաւիս նըման անասան
Նոմիկ՝ տարիներն ևն հանդիսեսես:

Թարգմ. ՄԻՍԱԲ ՄԵՇԱՐԵՆՅ

ԹՕՄԱՍ ԼԷՂ, ՓԻՔՕՔ

ԷՏԿԱՐ ՇԱՀԻՆ՝ Հայ նկարիչը՝ մէկն է Ֆրանսական արդի Գեղարուեստի վարպետներուն, և, նկարչական աշխարհին մէջ՝ կը վայելէ հուշակ մը ամէնէն եզականներէն։ Իր համբաւը տարածուած է ամբողջ Ֆրանսայի մէջ, փառքովը իր ինքնատիպ ու հազուադէպ ներուժեամբ արուեստին՝ որ սքանչանքը կը գրաւէ բոլոր Արուեստի վարպետներուն, ինչպէս գեղարուեստասէրներու։ Բարիզի Սալօններուն մէջ մրցանակի արժանացած միշտ, իր տաղանդը ու համբաւը շրջանը կ'ընեն ամէն տարի գեղարուեստական շրջանակներու և Ֆրանսերէն թերթերու, որոնք բարձր գնահատականներու պանծացումով կը հռչակեն զորձը Հայ արուեստագէտին։ Ինք նկարազարդած է Ֆրանսացի հեղինակներու գիրքերը և իր Գործը տիրական տեղ մը կը գրաւէ Ֆրանսական Գեղարուեստին մէջ։ Զայն **Մասլիսի** միջոցով իր ազգակից երկրացիներուն ծանօթացնելու նպատակով, իր մեծ արուեստովը ու զործովը, կը ներկայացնենք Ֆրանսացի գեղարուեստի քննադատի մը ուսումնասիրութիւնը, ընդարձակ ու նորը տեսութեան մը այն դիմագծութեամբ՝ որ երբեք երեւցած ըլլայ մեր մէջ իր վրայ։ Ֆրանսական գեղարուեստի ուսումին մէջ վայելող այս արուեստագէտ Հային փառքը՝ է՝ նաև մեր փառքը։ Զայն զգալու առիթ տալու մեր բաղձանքը կ'իրականանայ՝ Հայ ընթերցողներուն իր ծանօթացումովը **Մասլիսի** մէջ, ընդարձակ ու մասնագիտական ուսումնասիրութիւնով մը։

ԷՏԿԱՐ ՇԱՀԻՆ

Ինչ որ ամէն բանէ աւելի կը հրապուրէ Էտկար Շահինը, Բարիզն է, ամբողջ Բարիզը՝ իր դրդեկեակաւոր կամ մեռած քանդակներն թշուառութեամբ։ Իր օտարի նրբատես աչքը մերիններուն պէս յոգնած չէ տեսարանի մը կրկնումով, այնքան յաճախակի տեսնուած՝ որ ալ զայն անտեսելու աստիճանին կը հասնինք։ Իրեն ներկայացող անհունորէն զանազանակ կեանքը, արուարձանի տեսարաններէն մինչև ծառուղիները, կը համադրուէ զինքը։ Այնպէս որ շատ անգամ իր փորագրութեան կազմածը հետը առնելով դացած է փողոցը, պղինձին անմիջական հարուածներ տալով և անոր վրայ ձգելով կենդանի ուրուագիծերը ամրացնելու, Բիլիի հրապարակին և կամ կամուրջին տակ ընկողմանած քնացողներու, ամէնը քանի մը կորովի զիծելով ստուերադձուած ու վերջէն ժանտաջուրով փորուած։ Ահաւասիկ կանգ կ'առնէ մուրիկներ դիմագծելու, իր գրոցով վշտաւեր դէմքերու բոլոր խորշումները պրպտելով, հաստատապէս որոշադրելով անոնց կազմութիւնը, լքելով զանոնք երբ յանկարծածին տիպարը կորսնցնէ և անոնց քով վերսկսելով ուրիշ ստուերադձութիւն մը, կամ խորշոմած դէմք մը՝ մարած աչքերով, ծալձալ մորթով, անյարդար մօրուքով։ Ահաւասիկ մետաղին մէկ անկիւնը կը ծածկէ գրոցով փորուած ուրուագրութիւններով, կամ թթուաւոր կը փորագրէ անուշիկ աղջնակ մը, միւսումնայն տախտակին վրայ իրար խառնելով բոլոր իր գործերը։

Անշուր փորագրութեան մէջ է սակայն որ մասնաւորապէս գերա-

դանց է ինք: Իր գրոցը հաղիւ կրնայ գգուել պղինձը, հաղիւ կրնայ հաստատ ու թեթեւ դժով շրջափակ մը նշանադրել, կամ բազմաթիւ նրբին գիծերով ձեւ մը կերպել, և կամ խորապէս մխուիլ մետաղին մէջ, ցցելու համար մօրուքները որոնք հասակին երկու կողմէն թանաքը պիտի զուակն և այսպէսով պիտի տան սեւագրութիւններ, օժտուած յատկութիւնով մը՝ որ անծանօթ է ժանտաջուրին: Եւ այն ատեն ալ դարձեալ շատ մը ժանտաջուրի փորագրիչներու պէս պիտի չդոհանայ միայն ջնարակին հոկելով ու թթուռութիւն թողլով քիչ կամ շատ մետաղը ծակելու հոգը:

Իր գրոցը կը փորէ նաեւ պղինձը և այսպէսով գիծին կուտայ ձկու-նութիւն մը, զոր չպիտի կարենային տալ կէս մեքենական միջոցներ, ինչպէս են ժանտաջուրի յաջորդական լուացքները: Մնաց որ, Շահին արուեստը անհրաժեշտին կը վերածէ և կը շատանայ յաճախ թթուութեամբ վրձնելով փորագրելի մասերուն վրայ զետեղելով, և պէտք եղածին պէս տախտակը սրբելով կամ լուալով: Այս կերպին հետքերը կարելի է գտնել քանի մը փորագրութեանց մէջ, ինչպէս Ապուրի Բաշխուսին, ուր արուեստագէտը պղինձին վրայ կաթեցուցած է թթուութիւն քանի մը չիթեր՝ որոնք զայն տեղ տեղ վաղանցիկ բորով մը կըծած են:

Էտկար Շահին այս արուեստը կ'ամբողջացնէ հատիկի աշխատու-թեամբ: Ոչ միայն գիծին ձկուռութիւնը կը վնասէ, այլ նաեւ մակերե-սի լուսաւորութեանց զանազանութիւնը: Արժէքներու խոհական հաս-կացողութիւն մը ունի և ոչինչ պակաս կը թողու ստանալու համար ամէնէն այլապէս հակընդդիմութիւնները: Փոխնիփոխ կը գործածէ թթուութեամբ ծակելուած ռետինի հատիկը կամ ծծմբահատը՝ որ աւելի թանձրախիտ՝ ծածրադանդաղ միջնորոտներ ու կապարեայ երկինքներ կուտայ, և որ սակայն թոյլ կուտայ նաեւ նրբերանգուած ստուերներով ալ կերպաւորել: Եւ երբեմն ալ, զմոռեցնելով կը քերէ մետաղը, թեթեւ գունաւորումներ ստանալու համար: Վերջապէս նոյնիսկ Ռօփաի սոյնքան սիրելի կակուղ ջրգեղը փորձած է զինքը, և այս կերպով եղած են իր Անաթօլ Յրանսի Կասակերգական Պատմութեան պատկերազարդութիւն-ները, և իր գեղեցկագոյն կտորներէն մէկ քանին՝ ինչպէս Թափառական Հրեան մէջ Լեռանը: Պատճառը այն է որ այս ջրգեղը կը թոյլատրէ ստանալ փորագրական թխագոյնին նման գոյներ, և այսպէսով փորա-գրելը կը մերձենայ բնականապէս 1840ի վարպետներուն, Կավառնիի ու Տօմիէի:

Որովհետեւ Էտկար Շահին ինքն ալ մեծ նկարագրագէտ է, այդ բանը զինքը բնական կերպով տարած է փորագրելու կենդանագիրներ, Անաթօլ Յրանսինէն մինչեւ Վերլենքան Բօրնելիինը, Ալֆրէտ Սթեվենսի պատկերէն՝ մինչեւ ծանօթ Ժողովեալսէր Մ. Ժէպօինը, կամ Ուօլթըր Մալթասինը:

Պէտք է կանգ առնել իր Իսաղուհիի մը Պատկերին և Օր. Ճ.ի Պատկերին առջև: Անոնք բացարձակապէս հակընդդէմ տպաւորութիւն մը ունին: Առաջինին արուեստը զարմանալի դատողութիւն մը ունի. — դէմքը քիչ մը երազուն և արտայայտուած անհուն փափկութեամբ մը, աւանց որ և է աւելադրութեան. մասնաւոր արժէք մը կը ստանայ անկա չփակին գեղեցիկ թաշեայ սեւութենէն ու մեծախեղութեամբ գլխարկէն, որ յատկին վրայ կը բարձրանայ՝ թեթեւ հատիկներու պատրուակով մը. արուեստագէտը թուղթին ճերմակին վերարկուի դեր տուած է և այս պարզութիւնը իր այս գործին գերազանցութիւն մը կուտայ: Միեւնոյն սակաւապէտութիւնը կը գտնենք օրիորդ Ճ.ի չփակին սեւութեանը ու գլխարկին մէջ ալ, բայց հոս դէմքը արտակարգ կենդանութիւն մը ունի, այս սուր ու նուրբ դիմագծութիւնը, կամչոտ քիթով, կենդանի և անհամաչափ աչքերով, գեղեցիկ՝ իրրեւ արտայայտութիւն: Այնքան ուժգին իրականութիւն մը կայ հոն, որ անձնաւորութիւնը անսովոր կարկառ մը կը ստանայ, Հոֆմանէ մը կամ Էտկար Բօէ մը գծագրուած դիմատուերի մը պէս: Այս արուեստը քանի մը տարի վերջն է միայն որ տեղի կուտայ, երբ արուեստագէտը անբաղդատելի վառվռունութեամբ, որոշ գծագրութեամբ ու անսովոր կաղապարումով, կը կանգնէ Լուիզ Յրանսի իր պատկերները:

Ու դէմքի այն կենդանի արտայայտութիւնը զոր իր երիտասարդութենէն իսկ կը սիրէր յանկարծ գտնել Նովէլլի մը փոխնիփոխ ծիծղուն ու ողբական դիմակին վրայ, Էտկար Շաշին կուտայ իր Լիլիին, ձօրճիկալին ու Բիքալին. զայն կուտայ իր պերճադգեստ աղջկան տիպարներուն, և անակնկալ կերպով կ'արտայայտէ անոնց կեղծ ժպիտը, անոնց վաղաթաքնամ երիտասարդութիւնը և անոնց տարածուն աչքերը: Բայց իր դիտողութիւնը չի կառչիր մնար այդ պաշտելի ժաննկաղարգ թշուառութեան վրայ. անկա խոնարհներուն ու պատառատուն զգեստներով խեղճերուն ալ մտահոգութիւնը ունի: Ահաւասիկ, օրինակի համար Նեսաւանը, իր երեք անձերով, կամ Մօնմարթի Մուրացիկին մէջ, ապակեգոյն աչքերով Քրջանաւաքը, Ջրագառը և Մուրիկը՝ ձեռքերը գրպանը խոթած, գլուխը արհամարհանքով անդին դարձած, Մուրիկը՝ որ փորագրիչին առաջին գործերէն մէկն է՝ ուր կը հաստատուի արդէն իր տեսլականին վստահութիւնը:

